

ՊԵՆՏԵ ԺՅՈՒՆՆԵՐԻՅ

ՍԱՐՍԱՓ

Իր ողջ կյանքում, սկսած ծնվելու պահից մինչև մահը, մարդը գտնվում է սարսափի վիճակում: Նա սարսափում է կարիքից, ցավից ու մահից: Մանկուլթյան տարիներին, երբ երեխայի հոգեկանը շատ տպավորվող է, նրան սովորեցնում են վախենալ մթուժյունից, կրակից, հիվանդուլթյուններից, ավտոմեքենաներից, սուր առարկաներից, հրազենից, ոստիկաններից, դեղնամորթներից, կարմրամորթներից, սև մաշկ ունեցողներից, կույրերից, մորուքավորներից ու կաղերից, սովորեցնում են վախենալ շներից, առյուծներից, վագրերից, արջերից, փղերից և այլն:

Երիտասարդ տարիքում նա վախենում է միջին տարիքից, միջին տարիքում ծերուլթյունից, և ամբողջ կյանքում մահից:

Բացի դրանից, յուրաքանչյուր անհատ ունի իրեն բնորոշ սարսափները՝ որոշակի աննդամթերքներից, տաք կամ սառը ջրից, հյուսիսային կամ հարավային քամուց, գործազրկուլթյունից, տան տիրոջից, երեխաներից, ծնողներից, եղբայրներից և քույրերից, հարևանների բամբասանքից և այլն:

Այն բանից հետո, երբ պետուլթյունը պատերազմի մեջ է մտնում, մարդուն սկսում են հալածել նոր սարսափներ՝ պարտուլթյան, անորոշուլթյան, զրկանքների, կորուստների, վիրավորվելու և սպասվող այլ երևուլթյունների և դեպքերի առջև: Զինապարտը, որը ենթակա է զորակոչման՝ զինված ուժերում ծառայելու համար, անկախ այն ցանկուլթյունից և ոգևորուլթյունից, որոնցով գնում է ծառայելու, վախ է ունենում անհայտուլթյան հանդեպ: Արդյո՞ք իրեն դուր է գալու նոր կյանքը: Ինչպե՞ս են իր հետ վարվելու սպաներն ու սեր-

ժանտները: Արդյո՞ք իր նոր ընկերները կարգին մարդիկ են լինելու: Կուղարկե՞ն իրեն հենց այն գնդում ծառայելու, ուր ինքն է ուզում գնալ: Ինչպե՞ս են ապրելու կինն ու երեխաները իր բացակայության ընթացքում: Եվ բոլոր սարսափներից ամենամեծը՝ արդյո՞ք ինքը ողջ կմնա: Յուրաքանչյուր սպա և սերժանտ պետք է իմանա, որ բանակի մարտունակությունը գլխավորապես կախված է այն մեթոդների արդյունավետությունից, որոնց օգնությամբ զսպվում է մարդու բնազդային սարսափը:

Եթե զինվորներն ապրում են անորոշության մթնոլորտում, եթե նրանց հոգին հանում են մանրախնդրությամբ, վախեցնում են և հետապնդում, եթե կարգապահությունն ապահովվում է հիմնականում ճնշումների միջոցով, ապա նման պայմաններում բնազդային վախը սպառնալից չափեր է ընդունում լուրջ վնաս պատճառելով զորքերի մարտունակությանը: Բայց եթե զինվորների նկատմամբ ուշադիր են ու հոգատար, եթե նրանք զգում են, որ համախմբված են մեկ կոլեկտիվի մեջ, ապա չկան այնպիսի դժվարություններ, որ նրանք չկարողանան հաղթահարել:

Յուրաքանչյուր ղեկավարի պարտքն է՝ իր ենթակաների մեջ զարգացնել արիություն, որը մարդու բնության հրաշալի հատկություններից մեկն է: Այդ հատկությունը պետք է «հրաշալի» անվանել, քանի որ կան սարսափի մի քանի տեսակներ, որոնք ձգտում են ճնշել այն: Այդ խնդրի մասին խորհրդածելով դուք կհասկանաք, որ սարսափը կարող է հաղթանակ տանել զինվորի նկատմամբ, իսկ արիությունը՝ լքել նրան, եթե նա վատ ղեկավարներ ունի:

Եթե սեղմ սահմանում տալու լինենք, ապա սարսափն այն հույզն է, որն առաջ է գալիս մոտեցող աղետի ազդեցության տակ: Վախեցած մարդու բնական հակազդեցությունը թաքնվելն է կամ էլ փախչելով փրկվելը: Երբ երեխային բռնում են շարունակում անելիս, նա թաքնվում է: Երբ տարեց ջենտլմենը, ոտքն անզգուշաբար բանանի կեղևին դնելով, փռվում է գետնին, ապա երազում է, որ գետինը պատուվեր և կուլ տար իրեն՝ ազատելով անցորդների ծաղրից: Երեխան, մեծանալով, սկսում է հասկանալ, որ միշտ չէ, որ թաքնվելով կարող է ազատվել պատժից: Այդ պատճառով էլ նա փախչում հեռանում է: Իսկ երբ տարեց ջենտլմենը ոտքի է կանգնում, ապա նույնպես աշխատում է հեռանալ ու թաքնվել, թեև փորձում է պահպանել իր արժանապատվությունը:

Յուրաքանչյուր անհատ իր կյանքի ընթացքում բազմիցս, և բազմաթիվ ձևերով ու աստիճաններով, վախ ու սարսափ է զգում: Բոլոր նման դեպքերում նախաստեղծ բնազդը նրանում առաջ է բերում թաքնվելու կամ փախուստի միջոցով փրկվելու ձգտում: Թաքնվելու ձգտումը սովորաբար ընդունում է

ստախոսութիւնն ձև: Փախչելով փրկվելու հակումը կարող է տարբեր ձևեր ընդունել:

Սարսափ ապրող մարդը, սարսափի գոհը, հազվադեպ է փրկվում իրական ֆիզիկական փախուստի օգնութեամբ, քանի որ եթե մարդը փախչում է, ապա նա իր հետ տանում է նաև իր սարսափի պատճառները: Ոմանք նման դեպքերում ելքը գտնում են հարբելու և տարբեր նարկոտիկներ (թմրադեղեր) օգտագործելու մեջ: Ուրիշները ձգտում են ուշադրություն չդարձնել առաջ եկած հանգամանքների վրա: Օրինակ՝ կան մարդիկ, ովքեր անհույս կերպով պարտքերի մեջ խրվելով, սկսում են ավելի շատ ծախսել: Ավելի հազվադեպ, բայց լինում է նաև, որ սարսափ ապրող մարդը խելագարվում կամ ինքնասպանութուն է գործում:

Բարոյական կայունութունը սարսափի բնական թշնամին է: Անհայտութիւն հանդեպ վախը միշտ ավելի քայքայող և ուժասպառ անող է, քան սարսափը որևէ արդեն հայտնի բանից: Դա կարելի է ցույց տալ այն ոչ այնքան հազվադեպ հանդիպող օրինակով, երբ մարդը կասկածում է, որ ինքը քաղցիկ ունի, բայց սկզբում չի դիմում բժշկի օգնութեանը. նա վախենում է, որ իր կասկածները կարող են հաստատվել: Ժամանակի ընթացքում անհայտի ակնկալիքի առաջ բերած տագնապն ու սարսափն այնքան անտանելի են դառնում, որ նա սկսում է նախապատրաստվել մահվան և, քանի որ այլ ելք չի մնում, ի վերջո դիմում է բժշկի օգնութեանը: Նա իմանում է, որ իրեն ընդամենը վեց ամիս է մնացել ապրելու: Այժմ արդեն, ճշմարտութունն իմանալով, նա հանդարտվում է և իր մեջ ուժեր է գտնում՝ իր կյանքի մնացած մասը հանգիստ և նույնիսկ կենսուրախ ավարտելու համար:

Հայտնի է, որ մարտի դաշտում զինվորներն իրենց ավելի հանգիստ են զգում, երբ թշնամին արդեն հարձակման է անցնում, քան մինչև այդ հարձակման սկսվելը: Երբ մարդիկ չգիտեն, թե իրենց ինչ է սպասում, ապա նրանց հատուկ է կասկածել ու սպասել վատթարին: Իսկ երբ իրադարձութունները, որքան էլ դրանք շքեղանոց լինեն, արդեն հայտնի են, մարդիկ ի վիճակի են լինում հակադրվել դրանց: Մինչդեռ անհայտին հակադրվել մարդը չի կարող: Բանակում կայուն բարոյական վիճակ ապահովելու համար անհրաժեշտ է, որ պեսզի զորքերն իմանան այն ամենը, ինչ վերաբերում է իրենց վիճակին, եթե նույնիսկ վիճակն իսկապես շատ ծանր է: Իհարկե, լինում են դեպքեր, երբ որոշ տեղեկութուններ կարող են օգտակար լինել թշնամուն, այդ պատճառով դրանք պետք է գաղտնի պահվեն, բայց մնացած դեպքերում զինվորներին պետք է տեղյակ պահել ինչպես ամենալավի, այնպես էլ ամենավատի մասին:

Սարսափի լավագույն հակաթույնը կարգապահութունն է: Այն կարելի է բնութագրել որպես սարսափի աչքերին նայելու արվեստ: Բախվելով հա-

մարձակությանը՝ սարսափը կորցնում է իր ուժը: Բայց սարսափն իր իրավունքների մեջ է մտնում, երբ նրա զոհը իր փրկությունը փախուստի մեջ է որոնում: Այն մարդը, որն իր կյանքը կազմակերպում է ըստ որոշակի պլանի, չափավոր սովորություններ ունի և համեստ կյանք է վարում, ավելի պակաս չափով է ենթակա սարսափ զգալու, քան այն մարդը, ով ապրում է միայն այսօրվա հոգսերով, թույլ է տալիս, որպեսզի իր կյանքն ընթանա իր կամքից անկախ, և ընդունակ չէ կազմակերպելու ոչ իր աշխատանքը և ոչ էլ հանգիստը:

Երբ ենթարկվելը բնագդային է դառնում, ապա արիություն զրահը չի կարող այնպիսի ճեղքվածք տալ, որի միջով կարող էր թափանցել սարսափը: Երբ լիցքավորելու, նշան բռնելու և կրակելու հնարները ավտոմատացման աստիճանի են հասցվում, ապա ճակատամարտի թեժ պահին անկանոն կրակը քիչ հավանական է դառնում: Մարդու կողմից ձևավորված նման ավտոմատիզմը նրանում ինքնավստահության զգացում է առաջ բերում:

Այն, ինչ ճիշտ է առանձին անհատի վերաբերյալ, ճիշտ է նաև մի ամբողջ զորամասի վերաբերյալ: Տվյալ դեպքում ևս ուսուցումը մարդկանց մեջ ինքնավստահություն ծնող միջոց է դառնում, քանի որ հանգեցնում է նրանց գործողությունների փոխհամաձայնեցման: Այդպես է ստեղծվում համերաշխություն զգացումը: Զինվորներից յուրաքանչյուրն իրեն հանգիստ ու ապահով է զգում, քանզի գիտակցում է, որ ընկերներն իր հետ են և ոչ թե պարզապես իր կողքին, որ ցանկացած պահի պատրաստ են օգնության հասնելու իրեն: Կռակտիվը ներառել, «կուլ է տվել» իր անձը և ուժեղացրել ինքնավստահությունը:

Վատ կարգապահություն ունեցող բանակին հատուկ են ամբոխի բոլոր հատկություններն ու արատները, քանի որ միայն կարգապահությունն է ամբոխին բանակ դարձնում: Այն դեպքում, երբ բարձր կարգապահություն ունեցող բանակին անհնար է վախեցնել հանկարծահաս վտանգով, թույլ կարգապահություն ունեցող բանակը, ամբոխի նմանությամբ, դիմում է կույր ու խուճապային փախուստի: Այն դեպքում, երբ խիստ կարգապահություն ունեցող բանակում յուրաքանչյուրի ինքնավստահությունն ուժեղանում է իր ընկերների ինքնավստահությամբ, ապա թույլ կարգապահությամբ աչքի ընկնող բանակում յուրաքանչյուր զինվորի բնագդային վախն ուժեղանում, բորբոքվում է շրջապատողների սարսափի ազդեցության տակ: Յուրաքանչյուրն իր մեջ զգում է անմիջապես փախչելու և այդ կերպ փրկվելու ձգտում, որի հետևյալներն այնքան սոսկալի են, որ պատշաճության, հարգանքի կամ խղճի մասին ոչ մի պատկերացում այլևս չի կարող արգելք հանդիսանալ: Սարսափի

գոհերը հաճախ անընկալունակ և վտանգավոր մոլագարներ են դառնում, ու քանի դեռ վտանգը չի անցել՝ չեն սթափվում:

Վերը շարադրվածի լույսի ներքո դժվարանում ես հավատալ, որ կան մարդիկ, ովքեր կարգապահության ամրապնդմանը արհամարհանքով են վերաբերվում:

Թեև կարգապահությունը վախի ու սարսափի դեմ պայքարելու հզոր միջոց է, սակայն, իր հերթին, այլ միջոցներով ամրապնդվելու կարիք ունի: Օրինակ, երբ զորքերը ենթարկվում են ուժեղ ճնշումների խոչադարձող հարձակումների կամ հրակոծության և ստիպված սպասում են, թե թշնամին երբ է հաճակվելու, ապա նպատակահարմար է որոշակի ակտիվ գործողությունների օգնությամբ նրանց ուշադրությունը շեղել այդ վտանգից:

Կարելի է նամակներ բաժանել, հաշվել զինամթերքը, խորացնել խրամատները: Օգուտ կարող է տալ նաև, եթե հրաման տրվի նախապատրաստել հրազենը հարյուր, երկու հարյուր կամ հինգ հարյուր մետր հեռավորության վրա կրակ բացելու համար: Մի խոսքով, անհրաժեշտ է անել ամեն ինչ, որ պետքի զինվորները մոռանան իրենց սարսափը: Նույնիսկ ամենահամարձակ զինվորները վախ ու սարսափ են ապրում: Համարձակ և փոքրոգի զինվորների միջև միակ տարբերությունն այն է, որ առաջինի սարսափը իր վերահսկողության տակ է գտնվում, մինչդեռ երկրորդի սարսափը նրա վերահսկողությունից դուրս է:

Հենց այստեղ է, որ խելացի հրամանատարի առջև գործունեության լայն ասպարեզ է բացվում անկախ այն բանից իր զորքերը հարձակման անցնելու՞ են սպասում, թե՞ պատրաստվում են հետ մղել հակառակորդի հարձակումը: Առավել՝ քան երբևիցե նա պարտավոր է ոգեշնչել իր զինվորներին և համոզել նրանց, որ իրենք այնպիսի մի զորամաս ունեն, որտեղ զինվորներից յուրաքանչյուրին օժանդակում են բոլոր մյուսները, և անպայման վրա կհասնի հակառակորդին «հաշվից դուրս գրելու» ժամանակը:

Եթե ժամանակ կա, ապա հրամանատարը պետք է փորձի մի քանի խոսք ասել իր զինվորներին՝ նրանցից յուրաքանչյուրին դիմելով ազգանունով. «Դե՛հ, շարքային Մնուքս, քո գնդացիքը պատրաստ է գործելու: Այո՞: Հիանալի է: Շարքային Մալվանի, հիմա դու, կարծում եմ, համոզված ես, որ ստացար քո անձեռնմխելի պաշարը: Ճիշտ է: Հուսով եմ, որ այս տափաշիշը (ֆլյագան) լցված է ջրով, այնպես չէ՞, շարքային Բենդոլլեր: Սերժանտ, հապա օգնի՛ր շարքային Ֆորսայթին, որ կարգի բերի իր հանդերձանքը»: Դիմելու այսպիսի ձևը ոչ միայն համոզում է զինվորներից յուրաքանչյուրին, որ ինքը հարգված է և անհրաժեշտ, այլև, և դա շափազանց կարևոր է, ստիպում է

մտածել, որ իր նկատմամբ հատուկ համակրանք և հոգատարություն է տա-
ծում այն մարդը, որի կողքին նրանք կցանկանային լինել:

Շատ օգտակար է խրախուսել զինվորներին, որպեսզի նրանք փոքրիկ
ծառայություններ մատուցեն մեկը մյուսին: Երբ որևէ մեկին ուղարկում են,
որպեսզի օգնի մեկ ուրիշին, ապա նա մոռանում է իր սարսափը, իսկ մնացած-
ներն էլ սկսում են իրենց զգալ այնպես, ինչպես այդ մեկը:

Վտանգի սպասող զինվորների վրա ուժեղ տպավորություն են գոր-
ծում սպայի պատմություններն այն դեպքերի մասին, որոնց ընթացքում զին-
վորները արիություն են դրսևորել, նույնանման իրավիճակներում իրենց գնդի
ձեռք բերած հաջողությունների մասին: Եթե նույնիսկ նրա ձայնը լսելի է մի-
այն մի քանի յարդ՝ հեռավորության վրա, ապա հոգ չէ, որովհետև այդ պատ-
մությունները զինվորները հաճույքով փոխանցում են մեկը մյուսին և քննար-
կում ողջ գործասում:

Յուրաքանչյուր ղեկավար պետք է զգուշանա հակառակորդի ուժերը
թերագնահատելու գայթակղությունից: Իր «Իմ պալքարը» գրքում Արոլֆ
Հիտլերը պատմում է, թե Մեծ պատերազմի ժամանակ ինչպիսի հոգեցնցում
ապրեցին իր գնդի զինվորները, երբ առաջին անգամ բախման մեջ մտան ան-
գլխական զորքերի հետ: Հրամանատարներն իրենց ասել էին, թե անգլիացի-
ները ֆիզիկապես թույլ են ու վախկոտ: Դյուրահավատ զինվորները հավա-
տացել էին դրան: Կովի ժամանակ, հակառակորդի հետ առաջին ծանոթու-
թյունից հետո, զինվորները հասկացան, որ իրենց անխիղճ կերպով խաբել են:
Նրանք շատ վախեցան և հիասթափվեցին:

Եթե զորքերը համոզված են, որ գործերի վիճակը հենց այդպիսին է, և
երբ նրանք անսպասելիորեն բախվում են միանգամայն այլ իրադրության, ա-
պա այդպիսի անցման հանկարծակիությունը շատ հաճախ առաջ է բերում
խուճապ: Զորքերը պետք է կռվեն հավատարով իրենց ուժերին, իսկ դա նշա-
նակում է, որ նրանց պետք է ասել և՛ ամենալավի, և՛ ամենավատի մասին:

Սարսափի մյուս հիմնական հակաթույնը պատվասիրությունն է՝ նկա-
տելի լինելու, աչքի ընկնելու կրքոտ ցանկությունը: Սըր Արչիբալդ Ուելվելն
ընդգծում է, որ նապոլեոնը իր վեհությանը հասավ ոչ այնքան շնորհիվ ռազ-
մավարության հիմնավոր ուսումնասիրության, որքան պատերազմի ժամանակ
մարդկային բնավորությունների դրսևորումների փալլուն իմացության: Արդեն
նրա առաջին քայլերը վկայում էին, որ նա հոգեբանություն գիտե: Տուլոնի
պաշարման ժամանակ, լինելով հրետանու սպա, նա իր մարտկոցն առաջ մղ-
ված դիրքում տեղավորեց, ու թվում էր, թե այն սպասարկելու համար հագիվ

¹ Մեկ յարդը հավասար է երեք ֆուտի կամ 914,4 միլիմետրի: Թարգմ. ծնթ.:

Թե զինվորներ գտնվեն: Բայց նա մարտկոցի վերևում, շատ բարձր, մի պլակատ տեղադրեց, որի վրա գրված էր. «Անվախների մարտկոց»: Այդ մարտկոցում երբեք զինվորների պակաս չզգացվեց:

Յուրաքանչյուր զինվոր ցանկանում է հերոս համարվել: Սերնդեսերունդ զենքը փոխվում է, բայց մարդու բնույթն անփոփոխ է մնում: Ամեն մի մարտկոց պետք է իր պարզ նշանաբանը (դեհիզը) ունենա, այնպիսին, որ հենց իրենք՝ զինվորներն են հորինել: Որքան էլ տարօրինակ հնչի այդ նշանաբանը, զինվորներն ամբողջ ուժով ձգտելու են արդարացնել այն, եթե դա իրենց սեփական նշանաբանն է: Ինչպես կովի դաշտում, այնպես էլ խաղաղ պայմաններում սովորելիս, անհրաժեշտ է համառորեն ներշնչել զինվորներին, որ իրենց գորամասի համբավը պետք է անթերի լինի:

Կարիք չկա ասելու, որ սպաներն ու սերժանտները պետք է անձնական օրինակ ցույց տան: Հոլլը ընդգծում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում սպաների շրջանում կոնտուզիայի դեպքերը երեք-չորս անգամ ավելի հաճախ էին հանդիպում, քան զինվորների մոտ: Այս անհավասարաչափությունը Հոլլը բացատրում է նրանով, որ «սպաները ոչ միայն քաջ էին, այլև օրինակ էին ցույց տալիս իրենց զինվորներին»:

Ամբողջ գորամասը սպայի օժանդակությունն է որոնում, իսկ նա ոչ մեկի մոտ այն որոնել չի կարող: Սպան կարող է հույս դնել միայն իր վրա: Իսկ երբ նա հույսը դնում է մեկ ուրիշի վրա, ապա նրա հեղինակությունը վայրկենաբար ընկնում է: Վտանգի դեմ հանդիման զինվորները բնազդաբար դիմում են նրան, և երբ նա թեկուզ աննշան շփոթվածություն է հանդես բերում, զինվորների մարտական ոգին թուլանում է: Եվ այդպես է նույնսկ այն դեպքում, երբ ոչ մի լուրջ բան չի պատահում: Բայց եթե նա իրեն հանգիստ ու հավաք է պահում, ապա զինվորները շարունակում են մարտը՝ հավատալով, որ իրենց հրամանատարը վստահորեն կողմնորոշվում է իրադրության մեջ:

Այն գորքերը, որոնք գիտակցում են, որ իրենց մարտական պատրաստությունը զիջում են հակառակորդին, չեն կարող հուսալի լինել: Անգլիական զինվորներին հակառակորդի թվական գերակշռությունը չի ճնշում այնքան ժամանակ, քանի դեռ նրանք հավատում են, որ իրենց զենքը չի զիջում հակառակորդի զենքին: Հոգու խորքում անգլիացի զինվորը լավատես է, իսկ լավատեսությունը ուժ է տալիս, մինչդեռ հոռետեսությունը թուլացնում է:

Ձինվորներին ղեկավարելու արվեստն ամբողջությամբ կարելի է արտահայտել մեկ բանաձևով. նրանց պետք է լավատես դարձնել: Երբ զինվորները կարծում են, թե իրենց կյանքի պայմանները շատ վատն են, իսկ ղեկավարությունն էլ բանի պետք չէ, ապա նրանք հոռետեսական տրամադրության մեջ են ընկնում և մարտունակությունն էլ թուլանում է: Իսկ երբ զինվորները

գիտեն, որ իրենց մասին հոգ են տանում, իսկ հրամանատարներն էլ այնպիսի մարդիկ են, ովքեր թույլ չեն տա, որպեսզի աղետ պատահի, ապա նրանք լավատեսորեն են տրամադրվում և նրանց մարտունակությունն էլ բարձրանում է: Լավատեսությունը մարտունակություն է ծնում, մինչդեռ սարսափը սպանում է այն: Նապոլեոնի ասույթը վերածեց կերպերի, կարելի է ներկայացնել հեկյալ կերպ. «Մեկ գոհունակ զինվորը երեք դժգոհ զինվոր արժե»:

Զինվորի բարոյական բարձր վիճակի կարևորագույն աղբյուրը վստահությունն է: Այս գրույթը երեք այնքան ճիշտ չի եղել, որքան այժմ, երբ զինվորները, ապագայի նկատմամբ վստահություն չունենալով, ծանր խոհեր են ունենում: Արդյո՞ք պատերազմից հետո աշխատանք կունենան: Իրենց տներն արդյո՞ք վնասված չեն լինի: Ողջ կմնա՞ն, արդյոք, կինն ու երեխաները: Ինչպիսի՞ն կլինի հետպատերազմյան աշխարհը: Այս հարցերն են զբաղեցնում բոլոր զինվորների մտքերը: Անհրաժեշտ է ամեն ինչ անել զինվորներին ոգևորելու և նրանց վստահություն ներշնչելու համար:

Կարևոր դեր կարող է խաղալ կրոնը: Ավելին, եթե այն վճռականությամբ օգտագործվի, ապա կարող է անել ամեն ինչ: Սակայն այդ խնդիրը համազգային և միջազգային բնույթ ունի և, որպես այդպիսին, գրեթե անլուծելի է: Զորքերում աշխատող ռազմական կապելլաններն ու կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները պարտավոր են ամեն մի հնարավորությամբ օգտագործել զինվորներին ինքնավստահություն և այն գործի նկատմամբ հավատ ներշնչելու համար, հանուն որի նրանք կոչվում են: Եկեղեցական արարողությունները պետք է զինվորներին ոգեշնչելու միջոց դառնան, նրանց մարտական քաջագործությունների մղեն: Թող որ Աստվածաշնչի ընթերցումն ու քարոզները նպաստեն զինվորների հոգևոր վերելքին և ինքնավստահություն ներշնչեն նրանց: «Դու մեզ ստեղծողն ես, մեր Աստվածը, իսկ մենք քո ծառաներն ենք», - այս բանաձևը պետք է հիշեցնել կրկին ու կրկին: Աստծո օգնությամբ անգլիական կայսրությունը կհասնի հաղթանակի: Այդպիսի քարոզը չի կարող չվերականգնել վստահությունը: